ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գուլգուլյանը, Ե. Մատասյանը, Ս. Գևորգյանը, Բ. Տեր-Թովմասյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/36 որոշումը կատարելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 26.06.2019թ.
-ժամը՝ 11:00

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ 21.06.2019 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/36 որոշումը (հրապարակված՝ 25.06.2019թ.)՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցրել է 20.05.2019 թվականի ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.7 ենթակետով կայացված՝ «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց, որպես բավարար գնահատված հայտեր և նվազագույն գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցներ՝ ընտրված մասնակից հայտարարել կոնսորցիումին» որոշումը և 1.8 ենթակետով կայացված՝ «Գնահատող հաձնաժողովը որոշեց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ հայտարարել անգործություն՝ 5 օր և անգործության ավարտից հետո օրենքով սահմանված կարգով հաղթող մասնակիցների հետ կնքել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով ապրանքի գնման պայմանագրեր» որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հ/Հ	1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել			2-րդ տեղ զբաղեցրած մասնակից	3-րդ տեղ զբաղեցրած մասնակից
	Մասնակցի անուն	Պայմ. գին	ԱԱՀ		
1	«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ	45489600	+	«ԻԿՕ մաշինների» ՍՊԸ	----------

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել վերագնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին»

կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ		Ա. Մարտիրոսյան
Անդամներ		Վ. Գուլգուլյան
		Ե. Մատասյան
		Ս. Գևորգյան
		Բ. Տեր-Թովմասյան
Քարտուղար		Գ. Մուրադյան